ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հեղինակի կողմից 6

От автора 7

Երևան 8

Ամպն ու գիրքը 12

Կարոտ 19

Ծովն ու արևը 21

Մարդը 27

Երկու Հոգի 29

Պապն ու գիրքը 33

Վերադարձ 38

Что означает слово «джан»? 43

Իմ՝ հայերեն սովորող առաջին աշակերտին

Моему первому ученику, изучающему армянский язык

Հեղինակի կողմից

«Հայերեն Ջան» գիրքը համառոտ պատմվածքների ժողովածու է, որը նախատեսված է հայերեն ուսումնասիրող ցանկացած տարիքի ընթերցողի համար:

Հայերենն այնպիսի բարդ լեզու է, որ գրեթե անհնար է այն սովորելու ընթացքում լեզվի իմացության մակարդակը ամրապնդելու նպատակով հայերեն գրականություն կարդալ՝ առանց բարդության: Ուստի ընթերցողիս եմ առաջարկում պատմվածքներ, որոնք գրված են հնարավորինս պարզ և հասանելի լեզվով: Յուրաքանչյուր պատմվածքի համար ներկայացնում եմ բառարան՝ անհրաժեշտության դեպքում անծանոթ բառերի հետ ծանոթանալու համար: Բացի այդ՝ բանավոր խոսքը զարգացնելու համար ամեն պատմվածքից հետո կան հարցեր, որոնց պատասխանները թաքնված են հենց տեքստում, իսկ «*»–ով հարցերը կստիպեն մի փոքր մտածել:

Չափազանց ուրախ եմ, եթե գիրքս հայտնվել է ձեռքումդ, սիրելի՛ ընթերցող: Դա նշանակում է, որ ևս մեկը հետաքրքրված է հայերենով:

Ինձ համար աշխարհի ամենագեղեցիկ և ամենահարուստ լեզուն միանշանակ հայերենն է: Շնորհակալ եմ հետաքրքրությանդ համար, իմ ընթերցող:

От автора

Книга «Армянский Джан» — сборник коротких рассказов, написанный для читателя любого возраста. Армянский настолько сложный язык, что читать на нём литературу с целью закрепить знания языка почти невозможно без затруднений. Поэтому предлагаю своему читателю рассказы, которые написаны наиболее простым и понятным языком. После каждого рассказа представлен словарик, в котором можно посмотреть незнакомые слова. Кроме того, для улучшения навыка говорения на армянском после каждого рассказа даны вопросы, ответы на которые нужно искать в самом тексте, а вопросы со знаком «*» заставят немного подумать.

Я безумно рада, что моя книга оказалась в твоих руках, дорогой читатель. Это значит, что кто-то еще интересуется моим языком.

Для меня самый красивый и самый богатый язык в мире однозначно армянский. Спасибо за интерес к нему.

Երևան

Ամառ: Մարդկանց շատ պինդ գրկող արև: Ջերմություն ու սեր վարդագույն քաղաքում:

Փողոցներում ու այգիներում զբոսնող մարդիկ, որ չեն հոգնում զրուցելուց:

Նա առաջին անգամ էր Հայաստանում: Հայերեն մի փոքր սովորելուց հետո Երևանը նրան կանչել էր այդ ամառ իր մոտ:

Ժպտում էր: Անվերջ ժպտում էր՝ արևին, ծառերին, դեմքերին, շենքերին… Սեր էր զգում ամենից ու բոլորից:

— Բարև ձեզ: Ես ֆրանսիացի եմ, այսօր եմ եկել Հայաստան և ուզում եմ գնալ Հրապարակ: Ասեք, խնդրում եմ, ինչպես կարող եմ այնտեղ հասնել:

Մարդը, որ պիտի պատասխաներ հարցին, մի քանի վայրկյան նայեց լուռ ու ոչինչ չասաց: Հետո վերջապես զարմացած հարցրեց.



— Ա՛յ մարդ, դու որտեղի՞ց հայերեն գիտես:

Ֆրանսիացին միայն ժպտաց: Նա

ուրախ էր, որ մեկին արդեն զարմացրել էր իր հայերենով:

— Անունդ ի՞նչ է, ա՛յ տղա: Դու այսօրվանից իմ ընկերն ես, իմացի՛ր: Ես քեզ Հրապարակ էլ կտանեմ, Կասկադ ու Օպերա էլ կտանեմ: Հասկանում ես չէ՞՝ ինչ եմ ասում:

— Այո, ես ամեն ինչ հասկանում եմ, շնորհակալություն:

— Վա՛յ, վա՛յ, համ խոսում է, համ էլ հասկանում… Քեզ ո՞վ է հայերեն սովորեցրել:

Ու այդպես երկար փողոցում կանգնած մնացին. մարդը չէր հավատում, որ օտարերկրացին հայերեն էր խոսում: Նա երեխայի պես զարմանում ու ուրախանում էր:

Ամառ: Մարդկանց շատ պինդ գրկող արև: Ջերմություն ու սեր վարդագույն քաղաքում ու երկու մարդ, որ փողոցում կանգնած խոսում ու ծիծաղում են: Ու երկուսն էլ ուրախ են. երկուսն էլ հայերեն գիտեն:



Բառարան (Словарик) N1

Ամառ (сущ) лето	Հոգնել (гл) уставать
Մարդ (сущ) человек	Զրուցել (гл) разговаривать, беседовать
Մարդիկ люди	Մի փոքր (нареч) немного
Գրկել (гл) обнять	Սովորել (гл) учить
Արև (сущ) Солнце	Կանչել (гл) звать
Ջերմություն (сущ) теплота	Ժպտալ (гл) улыбаться
Սեր (сущ) любовь	Անվերջ (зд. нареч) бесконечно
Վարդագույն (прилаг) розовый, -ая	Ծառ (сущ) дерево
Քաղաք (сущ) город	Դեմք (сущ) лицо
Փողոց (сущ) улица	Շենք (сущ) здание, дом
Այգի (сущ) парк, сад	Զգալ (гл) чувствовать
Զբոսնել (гл) гулять	Ֆրանսիացի (сущ) француз
Հրապարակ (сущ) площадь (зд. Площадь Республики)	Տանել (гл) нести, носить, везти
Հասնել (гл) достичь; дойти	Հասկանալ (гл) понимать